

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏԱՆԵԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Օրենսգրքի 53-րդ հոդվածի 1-ին մասի երրորդ պարբերության երկրորդ նախադասությունը «պետք է բացառեն» բառերից հետո լրացնել «ծեծը, որպես դաստիարակության միջոց, ինչպես նաև» բառերով:

Հոդված 2. Օրենսգրքի 59-րդ հոդվածի՝

1) 1-ին մասի դ) կետում «հոգեկան» բառը փոխարինել «հոգեբանական» բառով.

2) 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ է) կետով.

«է) մեկ տարուց ավելի երեխայի հետ համատեղ չեն ապրում և խուսափում են նրան դաստիարակելուց ու խնամելուց, որում չի հաշվվում նրանց առողջապահական հիմնարկներում կամ կալանավայրերում գտնվելու ժամանակահատվածը:»:

Հոդված 3. Օրենսգրքի 60-րդ հոդվածի՝ 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Ծնողական իրավունքներից զրկելը կատարվում է դատական կարգով: Ծնողական իրավունքներից զրկելու վերաբերյալ գործերը քննվում են ծնողներից մեկի (օրինական ներկայացուցչի), խնամակալության և հոգաբարձության մարմինների, ինչպես նաև այն մարմինների ու կազմակերպությունների դիմումի հիման վրա, որոնց վրա օրենքով դրված են երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանության պարտականությունները:»:

Հոդված 4. Օրենսգրքի 63-րդ հոդվածի 3-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «3. Ծնողական իրավունքների սահմանափակման մասին հայց կարող են ներկայացնել երեխայի ծնողներից մեկը, մերձավոր ազգականները, խնամակալության և հոգաբարձության մարմինները, ինչպես նաև այն մարմիններն ու կազմակերպությունները, որոնց վրա օրենքով դրված են երեխաների իրավունքների ու շահերի պաշտպանության պարտականությունները:»:

Հոդված 5. Օրենսգրքի 67-րդ հոդվածի՝

1) վերնագրում և 1-ին մասում «դաստիարակության» բառը փոխարինել «իրավունքների և շահերի պաշտպանության» բառերով.

2) 2-րդ մասը «կյանքի» բառից հետո լրացնել «պայմանների» բառով:

Հոդված 6 Օրենսգրքի VI-րդ բաժնի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը»:

Հոդված 7. Օրենսգրքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1 գլխով. «**ԳԼՈՒԽ 16.1. ԵՐԵՒԱՆՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ԵՎ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ՈՒ ՆՐԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

Հոդված 108.1. Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության մարմինները

Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը դրվում է խնամակալության և հոգաբարձության մարմինների, Հայաստանի Հանրապետության մարզպետարանների, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի և Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմնի վրա:»:

Հոդված 108.2. Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության մարմինների գործունեության համակարգումը

Երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության մարմինների գործունեությունը համակարգում է Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված մարմինը:»:

Հոդված 8. Օրենսգրքի 17-րդ գլխի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների հայտնաբերումը և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների տեղավորումը» :

Հոդված 9. Օրենսգրքի 110-րդ հոդվածի՝

1) վերնագրում «Առանց ծնողական խնամքի մնացած» բառերից առաջ լրացնել «Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, այդ թվում նաև» բառերով.

2) 1-ին մասի առաջին պարբերությունում «սույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասով նշված» բառերը փոխարինել «կյանքի դժվարին իրավիճակում հայտնված» բառերով:

Հոդված 10. Օրենսգրքի 117-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1.Ամուսնության մեջ չգտնվող որդեգրողի և որդեգրվող երեխայի տարիքային տարբերությունը պետք է լինի տասնութ տարուց ոչ պակաս և հիսուն տարուց ոչ ավելի, իսկ որդեգրող ամուսինների տարիքը միասին չպետք է գերազանցի հարյուր տարին, բացառությամբ խորթ մոր, խորթ հոր կամ այլ մերձավոր ազգականների կողմից որդեգրման դեպքերի:»:

Հոդված 11. Օրենսգրքի 135-րդ հոդվածի 3-րդ մասում «թունամոլությամբ» բառից հետո ավելացնել «խաղամոլությամբ» բառը:

Հոդված 12. Օրենսգրքի 137-րդ հոդվածի՝

1) առաջին մասում՝

ա. չորրորդ պարբերությունը «խնամակալության և հոգաբարձության մարմնի» բառերից հետո լրացնել «,մարզպետարանի, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի» բառերով.

բ. լրացնել հինգերորդ պարբերություն հետևյալ բովանդակությամբ. «խնամատար ընտանիք երեխային դաստիարակության հանձնելու մասին պայմանագրի ձևը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:».

2) 2-րդ մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «Երեխային խնամատար ընտանիք հանձնելու և խնամատար ծնողների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:»:

Հոդված 13. Օրենսգրքի 140-րդ հոդվածի 1-ին մասում «պահելու» բառերը փոխարինել «խնամելու» բառով:

Հոդված 14. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

**«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ
և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի**

1.	<u>Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</u>
	<p>ՀՀ ընտանեկան օրենսգրքի նախագիծը մշակվել է ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1694-Ն որոշման N 2 հավելվածի 10-րդ կետի:</p> <p>Նախագծի ընդունումը պայմանավորված է սոցիալական պաշտպանության ոլորտում իրականացվող բարեփոխումներով: Առաջարկվող փոփոխությունների ու լրացումների անհրաժեշտությունը բխում է՝ երեխաների պաշտպանության համակարգում իրականացվող բարեփոխումներից և երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքի ապահովման առաջնահերթությունից:</p> <p>Սոցիալական իրավունքների եվրոպական հանձնաժողովի կողմից ազգային օրենքների և եվրոպական սոցիալական խարտիայի, Վերանայված խարտիայի հետ համապատասխանության վերաբերյալ եզրակացության մեջ նշվում է, որ Հայաստանում տիրող իրավիճակը չի համապատասխանում Վերանայված խարտիայի 17-րդ հոդվածի 1-ին պարբերությանը այն հիմքով, որ ընտանիքում և երեխայի այլընտրանքային խնամքում երեխայի մարմնական պատիժն արգելված չէ: Այդ իսկ պատճառով, ելնելով երեխայի շահերի պաշտպանության առաջնահերթությունից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կողմից 2001թ. ընդունված Վերանայված եվրոպական Սոցիալական խարտիայի 17-րդ հոդվածի պահանջից, օրենսգրքում նախատեսվել է դրույթ՝ երեխայի հանդեպ ծեծը, որպես դաստիարակության միջոց բացառելու վերաբերյալ:</p> <p>Ծնողական իրավունքներից զրկելու լրացուցիչ հիմք սահմանելը պայմանավորված է երեխայի ընտանիքում ապրելու գերակայությամբ, խնամք և պաշտպանություն իրականացնող հաստատություններում գտնվող այն երեխաների իրավունքների պաշտպանությամբ, որոնց ծնողները ոչ միայն չեն զբաղվում իրենց երեխաների խնամքով ու դաստիարակությամբ, այլ նաև երկար ժամանակով չեն այցելում հաստատություններում գտնվող իրենց երեխաներին:</p> <p>Նման իրավիճակում հայտնված երեխաները հիմնականում մինչև 18 տարեկանը լրանալը գտնվում են հաստատություններում: Այդ երեխաների ծնողներին ծնողական իրավունքից զրկելու դեպքում երեխաների կարգավիճակի փոփոխությունը իրավական հիմք կստեղծի նրանց ընտանիք տեղավորելու համար (որդեգրության, խնամակալության, խնամատար ընտանիք): Ներկայում մանկատներում խնամվող երեխաների ավելի քան 20%-ը կարող էր տեղավորվել ընտանիք, եթե նրանց ծնողները զրկվեին ծնողական իրավունքներից: Սույն փոփոխությունը ուղղված է ավանդական ընտանիքի պահպանման, երեխայի և ծնողի համատեղ ապրելու ծնողների պարտականությունների խստացմանը, երեխայի մուտքը հաստատություններ կանխարգելմանը:</p> <p>Ներկայում ՀՀ Ընտանեկան օրենսգրքի 117-րդ հոդվածում սահմանվում է որդեգրողի և որդեգրվող երեխայի միջև տարիքային տարբերությունը, որը պետք է լինի տասնութ տարուց ոչ պակաս:</p> <p>Ուստի Օրենսգրքով նախատեսված է որդեգրողի և որդեգրվող երեխայի միջև</p>

տարիքային տարբերության միայն նվազագույն շեմը, իսկ առավելագույնը օրենսգիրքը չի նախատեսում, ինչը հանդիսանում է օրենքի բաց:

Որդեգրող ամուսինների տարիքային գումարի սահմանափակումը որդեգրողի և որդեգրվող երեխայի միջև տարիքային տարբերության հարցի տրամաբանական շարունակությունն է, որը միանշանակ պետք է կարգավորվի օրենքով:

Որդեգրել ցանկացող անձանց նկատմամբ տարիքային պահանջ (սահմանափակում) սահմանելը պայմանավորված է երեխաների շահերի պաշտպանության և հնարավոր չարաշահումների կանխարգելման, մասնավորապես որդեգրվելուց հետո առավել երիտասարդ ծնողների կողմից նրանց խնամքի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությամբ:

«Ընտանեկան օրենսգրքում որդեգրող ամուսինների տարիքային գումարի սահմանափակման վերաբերյալ առաջարկությունը արվել է ելնելով երեխայի իրավունքների պաշտպանության լրացուցիչ երաշխիքներ ստեղծելու անհրաժեշտությունից:

«Ընտանեկան օրենսգրքում նախատեսել, որ որդեգրող ամուսինների տարիքային գումարը չպետք է գերազանցի 100 տարին:

Ընդունելով, որ ընտանիքում դաստիարակվող երեխաների իրավունքների պաշտպանության երաշխավորողը՝ նրա ծնողներն են, իսկ որդեգրված երեխայի դեպքում՝ որդեգրողները, սույն առաջարկությունը նպատակ է հետապնդում ստեղծել որդեգրվող երեխայի իրավունքների պաշտպանության առավել արդյունավետ մեխանիզմներ:

Նման ճանապարհով գնացել են մի շարք եվրոպական երկրներ, օրինակ՝ Ֆրանսիան, Իտալիան, Ֆինլանդիան, Դանիան, Խորվաթիան:

Տեղական և միջազգային փորձը ցույց է տալիս, որ մեծահասակ անձանց կողմից երեխայի որդեգրման դեպքում երեխայի դաստիարակության և խնամքի ընթացքում տարբեր տեսակի դժվարություններ առաջանալու ռիսկերի հավանականությունը մեծանում է: Դա պայմանավորված է մի շարք գործոններով՝

ա. երեխայի խնամքը և դաստիարակությունը, առավել ևս, փոքրահասակ տարիքում գտնվող երեխայի՝ կապված են ծնողների (որդեգրողների) ֆիզիկական, ինչպես նաև բարոյական և էմոցիոնալ ծանրաբեռնվածությամբ, որը երիտասարդ ծնողը, որպես կանոն, ավելի հեշտ է հաղթահարում, քան տարիքովը:

բ. մեծահասակ անձանց կողմից երեխայի որդեգրման դեպքերում առաջանում են նաև էթիկական խնդիրներ, ինչպես ծնողների, այդպես էլ երեխայի մոտ: Որդեգրող ծնողների և երեխայի միջև անբնական տարիքային մեծ տարբերությունը առաջացնում է, օրինակ՝ հասարակության ավելորդ ուշադրություն, շատ հարցերում դժվարեցնում է երեխա- ծնող փոխըմբռնումը:

գ. երեխայի խնամքը և դաստիարակությունը փոխկապակցված են լրացուցիչ նյութական ծախսերով, որոնք ոչ բոլոր դեպքերում կարող են թույլ տալ իրենց մեծահասակ որդեգրողները:

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում գործում է երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ՝

1. համայնքային մակարդակում՝ խնամակալության և հոգաբարձության մարմինները.
2. մարզային մակարդակում՝ մարզպետարանների, իսկ Երևանում՝ Երևանի քաղաքապետարանի ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության բաժինները.

	<p>3. Ազգային մակարդակում՝ Երեխաների իրավունքների պաշտպանության ազգային հանձնաժողովը:</p> <p>Սակայն Երեխաների իրավունքների պաշտպանությունն իրականացնող մարզային մակարդակը Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում դեռևս ամրագրված չէ: Ներկայացված նախագծով կլրացվի նշված օրենսդրական խնդիրը:</p>
2.	<p><u>2. Առաջարկվող կարգավորման բնույթը</u></p>
	<p>Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում ամրագրվում է երեխաների իրավունքների պաշտպանության եռաստիճան համակարգ:</p> <p>Սահմանվում են խնամատար ընտանիքների հետ իրավահարաբերությունների սահմանման և նրանց նկատմամբ վերահսկողության իրականացման մեխանիզմներ:</p> <p>Ամրագրվում է տարիքային սահմանափակում երեխա որդեգրողների նկատմամբ:</p> <p>Սահմանվում է ծնողական իրավունքներից զրկելու լրացուցիչ հիմք:</p> <p>Ծնողական իրավունքի սահմանափակման և ծնողական իրավունքից զրկման, երեխայի որդեգրմանն առնչվող փոփոխությունների նպատակն է երեխաների օրինական շահերի պաշտպանությունը:</p>
3.	<p>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձիք</p>
	<p>Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատակազմի մասնագետների կողմից:</p>
4.	<p>Ակնկալվող արդյունքը</p>
	<p>Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքի փոփոխությունները և լրացումները առավել մանրամասն և ամբողջական կերպով կկարգավորեն Հանրապետությունում երեխաների իրավունքների պաշտպանության համակարգում ներգրավված մարմինների և նրանց լիազորությունների ամրագրման, խնամատար ընտանիքի հետ իրավահարաբերությունների սահմանման և վերահսկման մեխանիզմների ստեղծման, ի շահ երեխայի ծնողական իրավունքների սահմանափակման, ծնողական իրավունքներից զրկման և որդեգրման գործընթացները:</p>

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման առնչությամբ պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումների կամ նվազեցումների մասին

«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագիծն ընդունելու դեպքում պետական բյուջեում կամ տեղական ինքնակառավարման մարմինների բյուջեներում ծախսերի և եկամուտների էական ավելացումներ կամ նվազեցումներ չեն առաջանում:

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման առնչությամբ ընդունվելիք այլ իրավական ակտերի կամ դրանց ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

1	Այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտությունը
	«Հայաստանի Հանրապետության ընտանեկան օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխությունների և/կամ լրացումների անհրաժեշտություն չի առաջանում:
2	Միջազգային պայմանագրերով ստանձնած պարտավորությունների հետ համապատասխանությունը
	Որոշման նախագծով կարգավորմանն առաջարկվող հարցերի մասով միջազգային պայմանագրերով լրացուցիչ պարտավորություններ չեն ստանձնվելու: